

լէպ, Սուրբիոյ այս մեծագոյն շահաստանը և Երուսաղէմ և Մեքքէ տանող ճանապարհը, իր այլազգի առաւելապէս եկւոր ժողովուրդով, զերծ չէ մնացած «տարածամ մահերէ», ինչպէս զօլէրաւային: Ամէն տասը տարին անգամ մը ընդհանուր մահ պատահած ըլլալով քաղաքին մէջ, կ'երևայ որ պարբերաբար, պետական իշխանութիւնները արգիլած են թաղումը Ս. Քառասնից բակին մէջ: Այս պատճառաւ տասնեակ մը վարդապետ և քահանայք թաղուած են, ինչպէս պիտի տեսնենք իր կարգին, Ազիզիէի Ազգ. Գերեզմանատան մէջ: Բայց կաթողիկոս և Արքեպիսկոպոս Առաջնորդներ, անպայման թաղուած են Ս. Քառասնից մատրան մէջ, անշուշտ բացառիկ արտօնութեամբ:

Այս առաջին մասի հնագոյն տապանաքարերը, քիչ բացառութեամբ, փոքր և պարզ քարեր են, մեծ մասամբ սպիտակ, ժամանակի ընթացքին գորչացած: Երեք հատը միայն զեղնագոյն կճեայ մարմարէ են, ընտիր փորագրութեամբ և հայադրոյժ ծաղկումներով: Ժէ. րդ դարը, ինչպէս ըսած ենք ուրիշ ուսումնասիրութեան մը մէջ* Հալէպի Հայոց կեանքին և մշակոյթին տեսակէտով, նշանաւոր եղաւ. անօրինակ ծաղկում մը յառաջացաւ Հալէպ ուսանին մէջ, չնորհիւ հոյլ մը զազափարապաշտ, ուսումնասէր և արուեստագէտ եկեղեցական և աշխարհական վարպետներու, որոնց առաջնորդութեամբ փայլուն շրջան մը սկսաւ Ս. Քառասնից և Ս. Աստուածածին եկեղեցիներու կից բացուած Դասատան մէջ: Այդ շրջանին մեծող Հայրապետներու, Արքեպիսկոպոսներու և ապականուոր այլ ազգայնոց դամբարանները մեծադիր են ընդհանրապէս, համակ դեղին կճեայ մարմարիոնէ, որ նշանաւոր է Հալէպի հին և արդի շինութեանց մէջ, և վրանին ունեցած ներկայանալի և մտածման արդիւնք տապանագիրներ: Բայց, ցաւ է ըսել, որ այդ շրջանը եր-

կար չէ տեւած: 1640 էն սաղին մեր կարգացած տապանագրերը շատ հասարակ և չոր բաներ են: Ազիզիէի Ազգ. Գերեզմանատանց մէջ ունինք նոյնպէս ծաղկեալ շրջանի յատուկ մեծադիր հոյակապ տապանաքարեր, որոնց վրայ հայ արուեստի զրոյժը կը տիրապետէ: Անոնք ազնիւ քարէ են, երկար, գեղեցիկ ծաղկումներով և կը պատկանին Արեւելքէն, Վանէն ու Ակնէն ու Արարկիրէն զաղթող տոհմիկ գերզատաններու:

Ս. Քառասնից շրջավայրի տապանաքարերը, բնական է, մեծագոյն մասամբ պաշտպանուած մնացին զարերու ընթացքին, վասնզի հսկող աչքեր կային անոնց վրայ: Բայց չենք կրնար մեր ուրախ զարմացումը զսպել, տեսնելով որ 1579էն մինչև 1894, այսինքն լման 315 տարի, չորս կողմը բաց մնացած, հանրային զբօսավայր և ընդհանուր ազատ ճանապարհ ծառայող Ազիզիէի հին Գերեզմանատանց տապանաքարերը, որոնց մէջ ինչպէս ըսինք պատմական և գեղարուեստական թանկագին բեկորներ կան, անաղարտ մնացած ըլլան մինչև օրս: Երբ, աւելի ուշ ժամանակներու մէջ, Ազիզիէի քրիստոնեայ բոլոր դամբարանները, իրենց տակ ամփոփած աճիւններով, փոխադրուելին նորագոյն գերեզմանավայրերու մէջ, ու լայն ու նեղ պողոտաներ բացուին, ինչպէս որ ծրագրած է Հալէպի Քաղաքապետութիւնը, և նոր շէնքերու շինութեամբ ընդարձակ տարածութիւն մը զբաւող թափուր արտերը փորուին ու խտացուին, անկասկած որ երեսան պիտի գան, ժամանակի ընթացքին մէջ ողողումով կամ այլ պատճառներով թաքնուած դամբարաններ, մանաւանդ հայկական, որոնք մեծ լոյս պիտի սփռեն Հալէպի Հայոց պատմութեան վրայ: Մե՛ղք որ, իրարու յաջորդող ձեռնհաս Առաջնորդներ, հինէն ի վեր, չեն մտածած առանձին քարտէսի վրայ զրոյժել հին տապանագրոց օրինակները. նոյնքան զարմանալի է որ Հալէպի մէջ զըրուած ու ծաղկուած բազմաթիւ հայերէն ձեռագրաց յիշատակարաններէն և ո՛չ

* Տե՛ս մեր La Vie et la Culture Arméniennes à Alep, au début de 17e siècle, Paris.